ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նոր Գեղի համայնք,Երևանյան 64,093335600,norgeghy@yahoo.com

# Ո Ր Ո Շ Ու Մ

14 հոկտեմբերի 2013թվականի N 56

## ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԱՎԱԳԱՆՈՒ N 11 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Նոր Գեղի համայնքի ավագանու 2013թվականի հոկտեմբերի 14-ի N 11 արտահերթ նիստի օրակարգը:

1) Համայնքի 2013 թվականի բյուջեի III եռամսյակի կատարման հաղորդման մասին

2)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգ հաստատելու մասին

3)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքի ղեկավարին կից,համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակի,անվանումների ու ձևավորման կարգը հաստատելու,գործունեության կարգը սահմանելու և հանրային բաց լսումներ կազմակերպելու մասին

4)Սուրբ Հովհաննես եկեղեցու գմբեթի բետոնե շաղախ ձեռք բերելու համար դրամական հատկացում կատարելու մասին

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

կողմ (11) դեմ (0) ձեռնպահ ( 0)

Վանիկ Ավայան
Արմեն Բաբախանյան
Վլադիկ Գրիգորյան
Գագիկ Գևորգյան
ՎահագԳևորգյան
Մանյա Կիրակոսյան
Շիրալի Մամոյան
Մերուժան Մինասյան
Շուշանիկ Նազլուխանյան
Նաթելա Շմավոնյան
Նանուլի Ոսկանյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՖՐՈՒՆՏԻԿ ԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նոր Գեղի համայնք,Երևանյան 64,093335600,norgeghy@yahoo.com

Ո Ր Ո Շ Ու Մ

14 հոկտեմբերի 2013թվականի N 57

ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ III ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՀԱՂՈՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջներով համայնքի ավագանին որոշում է.

Համայնքի 2013 թվականի բյուջեի կատարման III եռամսյակի հաղորդումը ընդունել ի գիտություն համաձայն հավելվածի:

Առդիր՝ 11 /տասնմեկ/ թերթ:

կողմ (11) դեմ ( 0 ) ձեռնպահ ( 0 )

Վանիկ Ավալյան
Արմեն Բաբախանյան
Վլադիկ Գրիգորյան
Գագիկ Գևորգյան
ՎահագԳևորգյան
Մանյա Կիրակոսյան
Շիրակի Մամոյան
Մերուժան Մինասյան
Շուշանիկ Նազլուխանյան
Նաթելա Շմավոնյան
Նանուլի Ոսկանյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԽՐՈՆՏԻԿ ԹԵՎՈՍՅԱՆ

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(01/01/2013թ. - 30/09/2013թ. ժամանակահատվածի համար)

| | |
|---|---|
| 1. Համայնքի անվանումը | ՆՈՐ ԳԵՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ |
| 2. Փոստային հասցե | |
| 3. Համայնքային տեղաբաշխման մարզը և համայնքի կոդը ըստ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման՝ | ԿՈՏԱՅՔ, |
| 4. Համայնքին սպասարկող Գանձապետական ստորաբաժանման անվանումը | ԵՂՎԱՐԴԻ ՏԳԲ |
| 5. Համայնքի՝ Գանձապետական ստորաբաժանումում հաշվառման համարը | 900116104010 |
| 6. Ծախսերի ֆինանսավորման աղբյուրի կոդը՝ | (համայնքի բյուջե՝ 2) |
| 7. Չափի միավորը՝ *հազար դրամ* | |

«14» նոյեմբերի 2013 թ. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԹԵՎՈՍՅԱՆ ՖՐՈՆՏԻԿ ԱԼԲԵՐՏԻ

(Ա. Ա. Հ.)

Կ. Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ 1

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(01/01/2013թ. - 30/09/2013թ. ժամանակահատվածի համար)

(հազար դրամով)

| Տողի N | Եկամտատեսակները | Հոդվածի NN | Տարեկան հաստատված պլան: Ընդամենը (ս.5+ս.6) | Տարեկան հաստատված պլան: այդ թվում վարչական մաս | Տարեկան հաստատված պլան: այդ թվում ֆոնդային մաս | Տարեկան ճշտված պլան: Ընդամենը (ս.8+ս.9) | Տարեկան ճշտված պլան: այդ թվում վարչական մաս | Տարեկան ճշտված պլան: այդ թվում ֆոնդային մաս | Փաստացի: Ընդամենը (ս.11+ս.12) | Փաստացի: այդ թվում վարչական մաս | Փաստացի: այդ թվում ֆոնդային մաս |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 1000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1100 + |  | 126601.0 | 126601.0 | 0.0 | 126601.0 | 126601.0 | 0.0 | 86540.0 | 86540.0 | 0.0 |
| 1100 | 1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ (տող 1110 + | 7100 | 40861.7 | 40861.7 | x | 40861.7 | 40861.7 | x | 26615.3 | 26615.3 | x |
| 1110 | 1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից | 7131 | 28207.1 | 28207.1 | x | 28207.1 | 28207.1 | x | 17495.9 | 17495.9 | x |
| 1111 | Գույքահարկ համայնքների վարչական |  | 14175.1 | 14175.1 | x | 14175.1 | 14175.1 | x | 7857.8 | 7857.8 | x |
| 1112 | Հողի հարկ համայնքների վարչական |  | 14032.0 | 14032.0 | x | 14032.0 | 14032.0 | x | 9638.1 | 9638.1 | x |
| 1120 | 1.2 Գույքային հարկեր այլ գույքից, այդ | 7136 | 10754.6 | 10754.6 | x | 10754.6 | 10754.6 | x | 6945.4 | 6945.4 | x |
| 1121 | Գույքահարկ փոխադրամիջոցների |  | 10754.6 | 10754.6 | x | 10754.6 | 10754.6 | x | 6945.4 | 6945.4 | x |
| 1130 | 1.3 Ապրանքների օգտագործման կամ | 7145 | 1900.0 | 1900.0 | x | 1900.0 | 1900.0 | x | 2174.0 | 2174.0 | x |
| 1131 | Տեղական տուրքեր, (տող 1132 + տող | 71452 | 1900.0 | 1900.0 | x | 1900.0 | 1900.0 | x | 2174.0 | 2174.0 | x |
| 1132 | ա) Համայնքի տարածքում նոր շենքերի, |  | 500.0 | 500.0 | x | 500.0 | 500.0 | x | 235.0 | 235.0 | x |
| 1133 | աա) Հիմնական շինությունների համար |  | 500.0 | 500.0 | x | 500.0 | 500.0 | x | 235.0 | 235.0 | x |
| 1137 | դ) Համայնքի տարածքում ոգելից |  | 700.0 | 700.0 | x | 700.0 | 700.0 | x | 960.0 | 960.0 | x |
| 1139 | զ) Համայնքի տարածքում հեղուկ |  | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 655.0 | 655.0 | x |
| 1142 | թ) Համայնքի տարածքում արտաքին |  | 700.0 | 700.0 | x | 700.0 | 700.0 | x | 324.0 | 324.0 | x |
| 1200 | 2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ | 7300 | 56519.3 | 56519.3 | x | 56519.3 | 56519.3 | x | 43362.9 | 43362.9 | x |
| 1250 | 2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական | 7331 | 56519.3 | 56519.3 | x | 56519.3 | 56519.3 | x | 43362.9 | 43362.9 | x |
| 1251 | ա) Պետական բյուջեից ֆինանսական |  | 55725.3 | 55725.3 | x | 55725.3 | 55725.3 | x | 37146.2 | 37146.2 | x |
| 1257 | զ) Պետական բյուջեից տրամադրվող |  | 794.0 | 794.0 | x | 794.0 | 794.0 | x | 6216.7 | 6216.7 | x |
| 1300 | 3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, (տող 1310 + տող | 7400 | 29220.0 | 29220.0 | x | 29220.0 | 29220.0 | x | 16561.8 | 16561.8 | x |
| 1330 | 3.3 Գույքի վարձակալությունից | 7415 | 10920.0 | 10920.0 | x | 10920.0 | 10920.0 | x | 9682.3 | 9682.3 | x |
| 1331 | Համայնքի սեփականություն համարվող | 7415 | 10200.0 | 10200.0 | x | 10200.0 | 10200.0 | x | 9142.3 | 9142.3 | x |
| 1334 | Այլ գույքի վարձակալությունից մուտքեր |  | 720.0 | 720.0 | x | 720.0 | 720.0 | x | 540.0 | 540.0 | x |
| 1350 | 3.5 Վարչական գանձումներ, (տող 1351 + | 7422 | 300.0 | 300.0 | x | 300.0 | 300.0 | x | 468.0 | 468.0 | x |
| 1351 | Տեղական վճարներ |  | 300.0 | 300.0 | x | 300.0 | 300.0 | x | 468.0 | 468.0 | x |
| 1390 | 3.9 Այլ եկամուտներ, (տող 1391 + տող | 7451 | x | 18000.0 | 0.0 | x | 18000.0 | 0.0 | x | 6411.5 | 0.0 |
| 1393 | Օրենքով և իրավական այլ ակտերով | 7451 | 18000.0 | 18000.0 | x | 18000.0 | 18000.0 | x | 6411.5 | 6411.5 | x |

ՀԱՎԵԼՎԱԾ 2

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
# ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
## (գործառնական դասակարգմամբ)
(01/01/2013թ. - 30/09/2013թ. ժամանակահատվածի համար)

(հազար դրամով)

| Տողի NN | Բա-ժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Տարեկան հաստատված պլան: Ընդամենը (ս.7+ս.8) | Տարեկան հաստատված պլան: այդ թվում վարչական բյուջե | Տարեկան հաստատված պլան: այդ թվում ֆոնդային բյուջե | Տարեկան ճշտված պլան: Ընդամենը (ս.10+ս.11) | Տարեկան ճշտված պլան: այդ թվում վարչական բյուջե | Տարեկան ճշտված պլան: այդ թվում ֆոնդային բյուջե | Փաստացի: Ընդամենը (ս.13+ս.14) | Փաստացի: այդ թվում վարչական բյուջե | Փաստացի: այդ թվում ֆոնդային բյուջե |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 2000 | X | X | X | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 2100 + տող | 126601,0 | 126601,0 | 0,0 | 129494,1 | 127625,6 | 1868,5 | 89001.2 | 86438.6 | 2562.6 |
| 2100 | 1 | 0 | 0 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ | 36812,0 | 36812,0 | 0,0 | 41153,1 | 39434,6 | 1718,5 | 30913.7 | 29851.6 | 1062.2 |
| 2110 | 1 | 1 | 0 | Օրենսդիր և գործադիր մարմիններ, | 35712,0 | 35712,0 | 0,0 | 39265,1 | 37546,6 | 1718,5 | 29293.3 | 28231.2 | 1062.2 |
| 2111 | 1 | 1 | 1 | Օրենսդիր և գործադիր մարմիններ, | 35712,0 | 35712,0 | 0,0 | 39265,1 | 37546,6 | 1718,5 | 29293.3 | 28231.2 | 1062.2 |
| 2160 | 1 | 6 | 0 | Ընդհանուր բնույթի հանրային | 1100,0 | 1100,0 | 0,0 | 1888,0 | 1888,0 | 0,0 | 1620.4 | 1620.4 | 0.0 |
| 2161 | 1 | 6 | 1 | Ընդհանուր բնույթի հանրային | 1100,0 | 1100,0 | 0,0 | 1888,0 | 1888,0 | 0,0 | 1620.4 | 1620.4 | 0.0 |
| 2200 | 2 | 0 | 0 | ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (այլ դասերին | 100,0 | 100,0 | 0,0 | 100,0 | 100,0 | 0,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2210 | 2 | 1 | 0 | Ռազմական պաշտպանություն, որից՝ | 50,0 | 50,0 | 0,0 | 50,0 | 50,0 | 0,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2220 | 2 | 2 | 0 | Քաղաքացիական պաշտպանություն, | 50,0 | 50,0 | 0,0 | 50,0 | 50,0 | 0,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2221 | 2 | 2 | 1 | Քաղաքացիական պաշտպանություն | 50,0 | 50,0 | 0,0 | 50,0 | 50,0 | 0,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2250 | 2 | 5 | 0 | Պաշտպանություն (այլ դասերին | 50,0 | 50,0 | 0,0 | 50,0 | 50,0 | 0,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2251 | 2 | 5 | 1 | Պաշտպանություն (այլ դասերին | 50,0 | 50,0 | 0,0 | 50,0 | 50,0 | 0,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2300 | 3 | 0 | 0 | ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ, | 100,0 | 100,0 | 0,0 | 100,0 | 100,0 | 0,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2320 | 3 | 2 | 0 | Փրկարար ծառայություն, որից՝ | 100,0 | 100,0 | 0,0 | 100,0 | 100,0 | 0,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2321 | 3 | 2 | 1 | Փրկարար ծառայություն | 100,0 | 100,0 | 0,0 | 100,0 | 100,0 | 0,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2400 | 4 | 0 | 0 | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | -18000,0 | 0,0 | -18000,0 | -18000,0 | 0,0 | -18000,0 | -5662.8 | 0.0 | -5662.8 |
| 2450 | 4 | 5 | 0 | Տրանսպորտ, որից՝ | 2000,0 | 0,0 | 2000,0 | 2000,0 | 0,0 | 2000,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2451 | 4 | 5 | 1 | Ճանապարհային տրանսպորտ | 2000,0 | 0,0 | 2000,0 | 2000,0 | 0,0 | 2000,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2490 | 4 | 9 | 0 | Տնտեսական հարաբերություններ (այլ | -20000,0 | 0,0 | -20000,0 | -20000,0 | 0,0 | -20000,0 | -5662.8 | 0.0 | -5662.8 |
| 2491 | 4 | 9 | 1 | Տնտեսական հարաբերություններ (այլ | -20000,0 | 0,0 | -20000,0 | -20000,0 | 0,0 | -20000,0 | -5662.8 | 0.0 | -5662.8 |
| 2500 | 5 | 0 | 0 | ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ | 3000,0 | 3000,0 | 0,0 | 3000,0 | 3000,0 | 0,0 | 2000.0 | 2000.0 | 0.0 |
| 2510 | 5 | 1 | 0 | Աղբահանում, որից՝ | 3000,0 | 3000,0 | 0,0 | 3000,0 | 3000,0 | 0,0 | 2000.0 | 2000.0 | 0.0 |
| 2511 | 5 | 1 | 1 | Աղբահանում | 3000,0 | 3000,0 | 0,0 | 3000,0 | 3000,0 | 0,0 | 2000.0 | 2000.0 | 0.0 |
| 2600 | 6 | 0 | 0 | ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ | 5000,0 | 0,0 | 5000,0 | 5000,0 | 0,0 | 5000,0 | 1280.0 | 0.0 | 1280.0 |
| 2640 | 6 | 4 | 0 | Փողոցների լուսավորում, որից՝ | 5000,0 | 0,0 | 5000,0 | 5000,0 | 0,0 | 5000,0 | 1280.0 | 0.0 | 1280.0 |
| 2641 | 6 | 4 | 1 | Փողոցների լուսավորում | 5000,0 | 0,0 | 5000,0 | 5000,0 | 0,0 | 5000,0 | 1280.0 | 0.0 | 1280.0 |
| 2700 | 7 | 0 | 0 | ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ (տող 2710 + տող | 1800,0 | 1800,0 | 0,0 | 1800,0 | 1800,0 | 0,0 | 1200.0 | 1200.0 | 0.0 |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2720 | 7 | 2 | 0 | Արտահիվանդանոցային ծառայություններ, | 1800,0 | 1800,0 | 0,0 | 1800,0 | 1800,0 | 0,0 | 1200.0 | 1200.0 | 0.0 |
| 2722 | 7 | 2 | 2 | Մասնագիտացված բժշկական | 1800,0 | 1800,0 | 0,0 | 1800,0 | 1800,0 | 0,0 | 1200.0 | 1200.0 | 0.0 |
| 2800 | 8 | 0 | 0 | ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ (տող | 29081,0 | 16081,0 | 13000,0 | 28831,0 | 15831,0 | 13000,0 | 16849.8 | 11116.6 | 5733.2 |
| 2820 | 8 | 2 | 0 | Մշակութային ծառայություններ, որից՝ | 29081,0 | 16081,0 | 13000,0 | 28831,0 | 15831,0 | 13000,0 | 13349.8 | 11116.6 | 2233.2 |
| 2823 | 8 | 2 | 3 | Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ | 19081,0 | 16081,0 | 3000,0 | 18831,0 | 15831,0 | 3000,0 | 13349.8 | 11116.6 | 2233.2 |
| 2824 | 8 | 2 | 4 | Այլ մշակութային կազմակերպություններ | 10000,0 | 0,0 | 10000,0 | 10000,0 | 0,0 | 10000,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2860 | 8 | 6 | 0 | Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասերին | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 3500.0 | 0.0 | 3500.0 |
| 2861 | 8 | 6 | 1 | Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասերին | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 3500.0 | 0.0 | 3500.0 |
| 2900 | 9 | 0 | 0 | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ (տող 2910 + տող 2920 + | 58477,0 | 58477,0 | 0,0 | 55827,0 | 55677,0 | 150,0 | 33986.1 | 33836.1 | 150.0 |
| 2910 | 9 | 1 | 0 | Նախադպրոցական և տարրական | 37341,0 | 37341,0 | 0,0 | 34541,0 | 34541,0 | 0,0 | 20234.1 | 20234.1 | 0.0 |
| 2911 | 9 | 1 | 1 | Նախադպրոցական կրթություն | 29914,0 | 29914,0 | 0,0 | 27414,0 | 27414,0 | 0,0 | 16277.7 | 16277.7 | 0.0 |
| 2912 | 9 | 1 | 2 | Տարրական ընդհանուր կրթություն | 7427,0 | 7427,0 | 0,0 | 7127,0 | 7127,0 | 0,0 | 3956.4 | 3956.4 | 0.0 |
| 2920 | 9 | 2 | 0 | Միջնակարգ ընդհանուր կրթություն, որից՝ | 5100,0 | 5100,0 | 0,0 | 5100,0 | 5100,0 | 0,0 | 3200.0 | 3200.0 | 0.0 |
| 2922 | 9 | 2 | 2 | Միջնակարգ(լրիվ) ընդհանուր կրթություն | 5100,0 | 5100,0 | 0,0 | 5100,0 | 5100,0 | 0,0 | 3200.0 | 3200.0 | 0.0 |
| 2950 | 9 | 5 | 0 | Ըստ մակարդակների չդասակարգվող | 16036,0 | 16036,0 | 0,0 | 16186,0 | 16036,0 | 150,0 | 10552.0 | 10402.0 | 150.0 |
| 2951 | 9 | 5 | 1 | Արտադպրոցական դաստիարակություն | 16036,0 | 16036,0 | 0,0 | 16186,0 | 16036,0 | 150,0 | 10552.0 | 10402.0 | 150.0 |
| 3000 | 10 | 0 | 0 | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ | 3800,0 | 3800,0 | 0,0 | 10600,0 | 10600,0 | 0,0 | 8434.4 | 8434.4 | 0.0 |
| 3070 | 10 | 7 | 0 | Սոցիալական հատուկ արտոնություններ | 3800,0 | 3800,0 | 0,0 | 10600,0 | 10600,0 | 0,0 | 8434.4 | 8434.4 | 0.0 |
| 3071 | 10 | 7 | 1 | Սոցիալական հատուկ արտոնություններ | 3800,0 | 3800,0 | 0,0 | 10600,0 | 10600,0 | 0,0 | 8434.4 | 8434.4 | 0.0 |
| 3100 | 11 | 0 | 0 | ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ | 6431,0 | 6431,0 | 0,0 | 1083,0 | 1083,0 | 0,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 3110 | 11 | 1 | 0 | ՀՀ կառավարության և համայնքների | 6431,0 | 6431,0 | 0,0 | 1083,0 | 1083,0 | 0,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 3112 | 11 | 1 | 2 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | 6431,0 | 6431,0 | 0,0 | 1083,0 | 1083,0 | 0,0 | 0.0 | 0.0 | 0.0 |

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
# ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
## (տնտեսագիտական դասակարգմամբ)
(01/01/2013թ. - 30/09/2013թ. ժամանակահատվածի համար)

(հազար դրամով)

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | NN | Տարեկան հաստատված պլան | | | Տարեկան ճշտված պլան | | | Փաստացի | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Ընդամենը (ս.5+ս.6) | այդ թվում | | Ընդամենը (ս.8+ս.9) | այդ թվում | | Ընդամենը (ս.11+ս.12) | այդ թվում | |
| | | | | վարչական մաս | ֆոնդային մաս | | վարչական մաս | ֆոնդային մաս | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 4000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 4050 + տող | x | 126601,0 | 126601.0 | 0.0 | 129494,1 | 127625.6 | 1868.5 | 89001.2 | 86438.6 | 2562.6 |
| 4050 | Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ (տող 4100 + տող | x | 126601,0 | 126601.0 | x | 127625,6 | 127625.6 | x | 86438.6 | 86438.6 | x |
| 4100 | 1.1 ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ | x | 71842,0 | 71842.0 | x | 71328,0 | 71328.0 | x | 47728.6 | 47728.6 | x |
| 4110 | ԴՐԱՄՈՎ ՎՃԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐ | x | 71842,0 | 71842.0 | x | 71328,0 | 71328.0 | x | 47728.6 | 47728.6 | x |
| 4111 | - Աշխատողների աշխատավարձեր և | 4111 | 71842,0 | 71842.0 | x | 71328,0 | 71328.0 | x | 47728.6 | 47728.6 | x |
| 4200 | 1.2 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ | x | 34198,0 | 34198.0 | x | 34634,6 | 34634.6 | x | 23845.7 | 23845.7 | x |
| 4210 | ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ (տող 4211 + | x | 9943,0 | 9943.0 | x | 10353,0 | 10353.0 | x | 6378.6 | 6378.6 | x |
| 4211 | - Գործառնական և բանկային | 4211 | 100,0 | 100.0 | x | 120,0 | 120.0 | x | 70.0 | 70.0 | x |
| 4212 | - Էներգետիկ ծառայություններ | 4212 | 7400,0 | 7400.0 | x | 8000,0 | 8000.0 | x | 5069.5 | 5069.5 | x |
| 4213 | - Կոմունալ ծառայություններ | 4213 | 605,0 | 605.0 | x | 405,0 | 405.0 | x | 200.8 | 200.8 | x |
| 4214 | - Կապի ծառայություններ | 4214 | 1775,0 | 1775.0 | x | 1765,0 | 1765.0 | x | 1038.3 | 1038.3 | x |
| 4217 | - Արտագերատեսչական ծախսեր | 4217 | 63,0 | 63.0 | x | 63,0 | 63.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4220 | ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ԵՎ | x | 1540,0 | 1540.0 | x | 1540,0 | 1540.0 | x | 1060.0 | 1060.0 | x |
| 4221 | - Ներքին գործուղումներ | 4221 | 1540,0 | 1540.0 | x | 1540,0 | 1540.0 | x | 1060.0 | 1060.0 | x |
| 4230 | ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԱՅԼ | x | 2335,0 | 2335.0 | x | 2609,6 | 2609.6 | x | 1685.6 | 1685.6 | x |
| 4232 | - Համակարգչային ծառայություններ | 4232 | 345,0 | 345.0 | x | 345,0 | 345.0 | x | 232.8 | 232.8 | x |
| 4233 | - Աշխատակազմի մասնագիտական | 4233 | 80,0 | 80.0 | x | 80,0 | 80.0 | x | 10.0 | 10.0 | x |
| 4234 | - Տեղակատվական ծառայություններ | 4234 | 350,0 | 350.0 | x | 200,0 | 200.0 | x | 99.4 | 99.4 | x |
| 4235 | - Կառավարչական ծառայություններ | 4235 | 0,0 | 0.0 | x | 360,0 | 360.0 | x | 360.0 | 360.0 | x |
| 4237 | - Ներկայացուցչական ծախսեր | 4237 | 300,0 | 300.0 | x | 376,6 | 376.6 | x | 360.0 | 360.0 | x |
| 4239 | - Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4239 | 1260,0 | 1260.0 | x | 1248,0 | 1248.0 | x | 623.4 | 623.4 | x |
| 4240 | ԱՅԼ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ | x | 1100,0 | 1100.0 | x | 1600,0 | 1600.0 | x | 1332.4 | 1332.4 | x |
| 4241 | - Մասնագիտական ծառայություններ | 4241 | 1100,0 | 1100.0 | x | 1600,0 | 1600.0 | x | 1332.4 | 1332.4 | x |
| 4250 | ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ | x | 340,0 | 340.0 | x | 710,0 | 710.0 | x | 687.6 | 687.6 | x |
| 4251 | - Շենքերի և կառույցների ընթացիկ | 4251 | 0,0 | 0.0 | x | 120,0 | 120.0 | x | 100.6 | 100.6 | x |
| 4252 | - Մեքենաների և սարքավորումների | 4252 | 340,0 | 340.0 | x | 590,0 | 590.0 | x | 587.0 | 587.0 | x |
| 4260 | ՆՅՈՒԹԵՐ (տող 4261 + տող 4262 + տող | x | 18940,0 | 18940.0 | x | 17822,0 | 17822.0 | x | 12701.5 | 12701.5 | x |

ՀԱՎԵԼՎԱԾ 4

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(հազար

| Տողի N | Եկամուտների անվանումները | Տարեկան հաստատված պլան | | | Տարեկան ճշտված պլան | | | Փաստացի | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ընդամենը(ս.4+ս.5) | այդ թվում | | Ընդամենը(ս.7+ս.8) | այդ թվում | | Ընդամենը(ս.10+ս.11) | այդ թվում | |
| | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| 8000 | ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՎԵԼՈՒՐԴԸ (դրական նշանով) ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ (բացասական նշանով)* | -2893,1 | -1024,6 | -1868,5 | -2893,1 | -1024,6 | -1868,5 | -81,9 | -45,9 | -36,0 |

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ
## [illegible]

(հազար դրամներով)

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման անվանումներ | NN | Տարեկան հաստատված պլան Ընդամենը (ս.5+ս.6) | այդ թվում վարչական մաս | այդ թվում ֆոնդային մաս | Տարեկան ճշտված պլան Ընդամենը (ս.8+ս.9) | այդ թվում վարչական մաս | այդ թվում ֆոնդային մաս | Փաստացի Ընդամենը (ս.11+ս.12) | այդ թվում վարչական մաս | այդ թվում ֆոնդային մաս |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 8010 | ԸՆԴԱՄԵՆԸ՝ (տող 8100+տող 8200), այդ թվում՝ (տող 8000 հակառակ նշանով) | | 2893,1 | 1024,6 | 1868,5 | 2893.1 | 1024.6 | 1868.5 | 82,9 | 45,9 | 36 |
| 8100 | Ա. ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (տող 8110+տող 8160), այդ թվում՝ | | 2893,1 | 1024,6 | 1868,5 | | | | 82,9 | 45,9 | 36 |
| 8160 | 2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ (տող 8161 + տող 8170 + տող 8190-տող 8197 + | | 2893,1 | 1024,6 | 1868,5 | | | | 82,9 | 45,9 | 36 |
| 8190 | 2.3. Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը՝ (տող | | 2893,1 | 1024,6 | 1868,5 | | | | 45,9 | 45,9 | |
| 8191 | 2.3.1. Համայնքի բյուջեի վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ | 9320 | 1024,6 | 1024,6 | x | | | x | 45,9 | 45,9 | x |
| 8193 | - ենթակա է ուղղման համայնքի բյուջեի ֆոնդային մաս (տող 8191 - տող 8192) | | 1024,6 | 1024,6 | x | | | x | 45,9 | 45,9 | x |
| 8194 | 2.3.2. Համայնքի բյուջեի ֆոնդային մասի միջոցների տարեսկզբի մնացորդ (տող | 9330 | 1868,5 | x | 1868,5 | x | x | | 36 | x | 36 |
| 8196 | - վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդից | | 1868,5 | x | 1868,5 | x | x | | 36 | x | 36 |

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
# ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
## (գործառնական և տնտեսագիտական դասակարգմամբ)

(01/01/2013թ. - 30/09/2013թ. ժամանակահատվածի համար)

(հազար դրամով)

| Տողի N | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի, դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի | Տարեկան հաստատված պլան: Ընդամենը (ս.7+ս.8) | Տարեկան հաստատված պլան: այդ թվում վարչական բյուջե | Տարեկան հաստատված պլան: այդ թվում ֆոնդային բյուջե | Տարեկան ճշտված պլան: Ընդամենը (ս.10+ս.11) | Տարեկան ճշտված պլան: այդ թվում վարչական բյուջե | Տարեկան ճշտված պլան: այդ թվում ֆոնդային բյուջե | Փաստացի: Ընդամենը (ս.13+ս.14) | Փաստացի: այդ թվում վարչական բյուջե | Փաստացի: այդ թվում ֆոնդային բյուջե |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 2000 | X | X | X | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 2100 + տող | 126601,0 | 126601,0 | 0,0 | 129494,1 | 127625,6 | 1868,5 | 89001.2 | 86438.6 | 2562.6 |
| 2100 | 1 | 0 | 0 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ | 36812,0 | 36812,0 | 0,0 | 41153,1 | 39434,6 | 1718,5 | 30913.7 | 29851.6 | 1062.2 |
| 2110 | 1 | 1 | 0 | Օրենսդիր և գործադիր մարմիններ, | 35712,0 | 35712,0 | 0,0 | 39265,1 | 37546,6 | 1718,5 | 29293.3 | 28231.2 | 1062.2 |
| 2111 | 1 | 1 | 1 | Օրենսդիր և գործադիր մարմիններ, | 35712,0 | 35712,0 | 0,0 | 39265,1 | 37546,6 | 1718,5 | 29293.3 | 28231.2 | 1062.2 |
| | | | | - Աշխատողների աշխատավարձեր և | 24614,0 | 24614,0 | 0,0 | 24100,0 | 24100,0 | 0,0 | 17511.8 | 17511.8 | 0.0 |
| | | | | - Գործառնական և բանկային | 100,0 | 100,0 | 0,0 | 100,0 | 100,0 | 0,0 | 70.0 | 70.0 | 0.0 |
| | | | | - Էներգետիկ ծառայություններ (4212) | 2400,0 | 2400,0 | 0,0 | 3000,0 | 3000,0 | 0,0 | 2280.0 | 2280.0 | 0.0 |
| | | | | - Կոմունալ ծառայություններ (4213) | 200,0 | 200,0 | 0,0 | 50,0 | 50,0 | 0,0 | 7.8 | 7.8 | 0.0 |
| | | | | - Կապի ծառայություններ (4214) | 1300,0 | 1300,0 | 0,0 | 1300,0 | 1300,0 | 0,0 | 807.3 | 807.3 | 0.0 |
| | | | | - Արտագերատեսչական ծախսեր (4217) | 63,0 | 63,0 | 0,0 | 63,0 | 63,0 | 0,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | - Ներքին գործուղումներ (4221) | 600,0 | 600,0 | 0,0 | 600,0 | 600,0 | 0,0 | 440.0 | 440.0 | 0.0 |
| | | | | - Համակարգչային ծառայություններ (4232) | 345,0 | 345,0 | 0,0 | 345,0 | 345,0 | 0,0 | 232.8 | 232.8 | 0.0 |
| | | | | - Աշխատակազմի մասնագիտական | 50,0 | 50,0 | 0,0 | 50,0 | 50,0 | 0,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | - Տեղակատվական ծառայություններ | 350,0 | 350,0 | 0,0 | 200,0 | 200,0 | 0,0 | 99.4 | 99.4 | 0.0 |
| | | | | - Ներկայացուցչական ծախսեր (4237) | 300,0 | 300,0 | 0,0 | 16,6 | 16,6 | 0,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | - Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 250,0 | 250,0 | 0,0 | 100,0 | 100,0 | 0,0 | 90.0 | 90.0 | 0.0 |
| | | | | - Մեքենաների և սարքավորումների | 340,0 | 340,0 | 0,0 | 590,0 | 590,0 | 0,0 | 587.0 | 587.0 | 0.0 |
| | | | | - Գրասենյակային նյութեր և հագուստ | 400,0 | 400,0 | 0,0 | 250,0 | 250,0 | 0,0 | 198.0 | 198.0 | 0.0 |
| | | | | - Տրանսպորտային նյութեր (4264) | 4000,0 | 4000,0 | 0,0 | 6222,0 | 6222,0 | 0,0 | 5416.5 | 5416.5 | 0.0 |
| | | | | - Հատուկ նպատակային այլ նյութեր (4269) | 320,0 | 320,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | - Այլ ծախսեր (4861) | 80,0 | 80,0 | 0,0 | 80,0 | 80,0 | 0,0 | 30.0 | 30.0 | 0.0 |
| | | | | - Վարչական սարքավորումներ (5122) | 0,0 | 0,0 | 0,0 | 725,5 | 0,0 | 725,5 | 70.0 | 0.0 | 70.0 |
| | | | | - Նախագծահետազոտական ծախսեր | 0,0 | 0,0 | 0,0 | 993,0 | 0,0 | 993,0 | 992.2 | 0.0 | 992.2 |
| 2160 | 1 | 6 | 0 | Ընդհանուր բնույթի հանրային | 1100,0 | 1100,0 | 0,0 | 1888,0 | 1888,0 | 0,0 | 1620.4 | 1620.4 | 0.0 |
| 2161 | 1 | 6 | 1 | Ընդհանուր բնույթի հանրային | 1100,0 | 1100,0 | 0,0 | 1888,0 | 1888,0 | 0,0 | 1620.4 | 1620.4 | 0.0 |
| | | | | - Մասնագիտական ծառայություններ | 1100,0 | 1100,0 | 0,0 | 1600,0 | 1600,0 | 0,0 | 1332.4 | 1332.4 | 0.0 |
| 2200 | 2 | 0 | 0 | ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (այլ դասերին | 100,0 | 100,0 | 0,0 | 100,0 | 100,0 | 0,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2210 | 2 | 1 | 0 | Ռազմական պաշտպանություն, որից` | 50,0 | 50,0 | 0,0 | 50,0 | 50,0 | 0,0 | 0.0 | 0.0 | 0.0 |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2211 | 2 | 1 | 1 | Ռազմական պաշտպանություն | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2220 | 2 | 2 | 0 | Քաղաքացիական պաշտպանություն, | 50,0 | 50,0 | 0,0 | 50,0 | 50,0 | 0,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2221 | 2 | 2 | 1 | Քաղաքացիական պաշտպանություն | 50,0 | 50,0 | 0,0 | 50,0 | 50,0 | 0,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | - Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 50,0 | 50,0 | 0,0 | 50,0 | 50,0 | 0,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2250 | 2 | 5 | 0 | Պաշտպանություն (այլ դասերին | 50,0 | 50,0 | 0,0 | 50,0 | 50,0 | 0,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2251 | 2 | 5 | 1 | Պաշտպանություն (այլ դասերին | 50,0 | 50,0 | 0,0 | 50,0 | 50,0 | 0,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | - Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 50,0 | 50,0 | 0,0 | 50,0 | 50,0 | 0,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2300 | 3 | 0 | 0 | ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ, | 100,0 | 100,0 | 0,0 | 100,0 | 100,0 | 0,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2320 | 3 | 2 | 0 | Փրկարար ծառայություն, որից՝ | 100,0 | 100,0 | 0,0 | 100,0 | 100,0 | 0,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2321 | 3 | 2 | 1 | Փրկարար ծառայություն | 100,0 | 100,0 | 0,0 | 100,0 | 100,0 | 0,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | - Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 100,0 | 100,0 | 0,0 | 100,0 | 100,0 | 0,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2400 | 4 | 0 | 0 | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | -18000,0 | 0,0 | -18000,0 | -18000,0 | 0,0 | -18000,0 | -5662.8 | 0.0 | -5662.8 |
| 2450 | 4 | 5 | 0 | Տրանսպորտ, որից՝ | 2000,0 | 0,0 | 2000,0 | 2000,0 | 0,0 | 2000,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2451 | 4 | 5 | 1 | Ճանապարհային տրանսպորտ | 2000,0 | 0,0 | 2000,0 | 2000,0 | 0,0 | 2000,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | - Շենքերի և շինությունների կառուցում | 2000,0 | 0,0 | 2000,0 | 2000,0 | 0,0 | 2000,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2490 | 4 | 9 | 0 | Տնտեսական հարաբերություններ (այլ | -20000,0 | 0,0 | -20000,0 | -20000,0 | 0,0 | -20000,0 | -5662.8 | 0.0 | -5662.8 |
| 2491 | 4 | 9 | 1 | Տնտեսական հարաբերություններ (այլ | -20000,0 | 0,0 | -20000,0 | -20000,0 | 0,0 | -20000,0 | -5662.8 | 0.0 | -5662.8 |
| 2500 | 5 | 0 | 0 | ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ | 3000,0 | 3000,0 | 0,0 | 3000,0 | 3000,0 | 0,0 | 2000.0 | 2000.0 | 0.0 |
| 2510 | 5 | 1 | 0 | Աղբահանում, որից՝ | 3000,0 | 3000,0 | 0,0 | 3000,0 | 3000,0 | 0,0 | 2000.0 | 2000.0 | 0.0 |
| 2511 | 5 | 1 | 1 | Աղբահանում | 3000,0 | 3000,0 | 0,0 | 3000,0 | 3000,0 | 0,0 | 2000.0 | 2000.0 | 0.0 |
| | | | | - Սուբսիդիաներ ոչ ֆինանսական | 3000,0 | 3000,0 | 0,0 | 3000,0 | 3000,0 | 0,0 | 2000.0 | 2000.0 | 0.0 |
| 2600 | 6 | 0 | 0 | ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ | 5000,0 | 0,0 | 5000,0 | 5000,0 | 0,0 | 5000,0 | 1280.0 | 0.0 | 1280.0 |
| 2640 | 6 | 4 | 0 | Փողոցների լուսավորում, որից՝ | 5000,0 | 0,0 | 5000,0 | 5000,0 | 0,0 | 5000,0 | 1280.0 | 0.0 | 1280.0 |
| 2641 | 6 | 4 | 1 | Փողոցների լուսավորում | 5000,0 | 0,0 | 5000,0 | 5000,0 | 0,0 | 5000,0 | 1280.0 | 0.0 | 1280.0 |
| | | | | - Շենքերի և շինությունների կառուցում | 5000,0 | 0,0 | 5000,0 | 5000,0 | 0,0 | 5000,0 | 1280.0 | 0.0 | 1280.0 |
| 2700 | 7 | 0 | 0 | ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ (տող 2710 + տող | 1800,0 | 1800,0 | 0,0 | 1800,0 | 1800,0 | 0,0 | 1200.0 | 1200.0 | 0.0 |
| 2720 | 7 | 2 | 0 | Արտահիվանդանոցային | 1800,0 | 1800,0 | 0,0 | 1800,0 | 1800,0 | 0,0 | 1200.0 | 1200.0 | 0.0 |
| 2721 | 7 | 2 | 1 | Ընդհանուր բնույթի բժշկական | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2722 | 7 | 2 | 2 | Մասնագիտացված բժշկական | 1800,0 | 1800,0 | 0,0 | 1800,0 | 1800,0 | 0,0 | 1200.0 | 1200.0 | 0.0 |
| | | | | - Սուբսիդիաներ ֆինանսական պետական | 1800,0 | 1800,0 | 0,0 | 1800,0 | 1800,0 | 0,0 | 1200.0 | 1200.0 | 0.0 |
| 2800 | 8 | 0 | 0 | ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ (տող | 29081,0 | 16081,0 | 13000,0 | 28831,0 | 15831,0 | 13000,0 | 16849.8 | 11116.6 | 5733.2 |
| 2820 | 8 | 2 | 0 | Մշակութային ծառայություններ, որից՝ | 29081,0 | 16081,0 | 13000,0 | 28831,0 | 15831,0 | 13000,0 | 13349.8 | 11116.6 | 2233.2 |
| 2823 | 8 | 2 | 3 | Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ | 19081,0 | 16081,0 | 3000,0 | 18831,0 | 15831,0 | 3000,0 | 13349.8 | 11116.6 | 2233.2 |
| | | | | - Աշխատողների աշխատավարձեր և | 12291,0 | 12291,0 | 0,0 | 12291,0 | 12291,0 | 0,0 | 8727.0 | 8727.0 | 0.0 |
| | | | | - Էներգետիկ ծառայություններ (4212) | 1800,0 | 1800,0 | 0,0 | 1800,0 | 1800,0 | 0,0 | 1121.2 | 1121.2 | 0.0 |
| | | | | - Կոմունալ ծառայություններ (4213) | 100,0 | 100,0 | 0,0 | 50,0 | 50,0 | 0,0 | 3.0 | 3.0 | 0.0 |
| | | | | - Կապի ծառայություններ (4214) | 80,0 | 80,0 | 0,0 | 70,0 | 70,0 | 0,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | - Ներքին գործուղումներ (4221) | 360,0 | 360,0 | 0,0 | 360,0 | 360,0 | 0,0 | 270.0 | 270.0 | 0.0 |
| | | | | - Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 300,0 | 300,0 | 0,0 | 150,0 | 150,0 | 0,0 | 85.4 | 85.4 | 0.0 |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | - Գրասենյակային նյութեր և հագուստ | 200,0 | 200,0 | 0,0 | 150,0 | 150,0 | 0,0 | 100.0 | 100.0 | 0.0 |
| | | | | - Տրանսպորտային նյութեր (4264) | 600,0 | 600,0 | 0,0 | 600,0 | 600,0 | 0,0 | 450.0 | 450.0 | 0.0 |
| | | | | - Սուբսիդիաներ ոչ պետական (ոչ | 350,0 | 350,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | - Վարչական սարքավորումներ (5122) | 3000,0 | 0,0 | 3000,0 | 3000,0 | 0,0 | 3000,0 | 2233.2 | 0.0 | 2233.2 |
| 2824 | 8 | 2 | 4 | Այլ մշակութային կազմակերպություններ | 10000,0 | 0,0 | 10000,0 | 10000,0 | 0,0 | 10000,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | - Շենքերի և շինությունների կառուցում | 10000,0 | 0,0 | 10000,0 | 10000,0 | 0,0 | 10000,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2860 | 8 | 6 | 0 | Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասերին | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 3500.0 | 0.0 | 3500.0 |
| 2861 | 8 | 6 | 1 | Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասերին | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 3500.0 | 0.0 | 3500.0 |
| | | | | - Շենքերի և շինությունների կառուցում | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 3500.0 | 0.0 | 3500.0 |
| 2900 | 9 | 0 | 0 | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ (տող 2910 + տող 2920 + | 58477,0 | 58477,0 | 0,0 | 55827,0 | 55677,0 | 150,0 | 33986.1 | 33836.1 | 150.0 |
| 2910 | 9 | 1 | 0 | Նախադպրոցական և տարրական | 37341,0 | 37341,0 | 0,0 | 34541,0 | 34541,0 | 0,0 | 20234.1 | 20234.1 | 0.0 |
| 2911 | 9 | 1 | 1 | Նախադպրոցական կրթություն | 29914,0 | 29914,0 | 0,0 | 27414,0 | 27414,0 | 0,0 | 16277.7 | 16277.7 | 0.0 |
| | | | | - Աշխատողների աշխատավարձեր և | 16474,0 | 16474,0 | 0,0 | 16474,0 | 16474,0 | 0,0 | 9380.4 | 9380.4 | 0.0 |
| | | | | - Սոցիալական ապահովության վճարներ | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | - Էներգետիկ ծառայություններ (4212) | 2000,0 | 2000,0 | 0,0 | 2000,0 | 2000,0 | 0,0 | 1147.3 | 1147.3 | 0.0 |
| | | | | - Կոմունալ ծառայություններ (4213) | 200,0 | 200,0 | 0,0 | 200,0 | 200,0 | 0,0 | 180.0 | 180.0 | 0.0 |
| | | | | - Կապի ծառայություններ (4214) | 130,0 | 130,0 | 0,0 | 130,0 | 130,0 | 0,0 | 98.0 | 98.0 | 0.0 |
| | | | | - Ներքին գործուղումներ (4221) | 250,0 | 250,0 | 0,0 | 250,0 | 250,0 | 0,0 | 150.0 | 150.0 | 0.0 |
| | | | | - Աշխատակազմի մասնագիտական | 30,0 | 30,0 | 0,0 | 30,0 | 30,0 | 0,0 | 10.0 | 10.0 | 0.0 |
| | | | | - Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 50,0 | 50,0 | 0,0 | 50,0 | 50,0 | 0,0 | 30.0 | 30.0 | 0.0 |
| | | | | - Գրասենյակային նյութեր և հագուստ | 650,0 | 650,0 | 0,0 | 350,0 | 350,0 | 0,0 | 200.0 | 200.0 | 0.0 |
| | | | | - Առողջապահական և լաբորատոր | 100,0 | 100,0 | 0,0 | 100,0 | 100,0 | 0,0 | 60.0 | 60.0 | 0.0 |
| | | | | - Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 10030,0 | 10030,0 | 0,0 | 7830,0 | 7830,0 | 0,0 | 5022.0 | 5022.0 | 0.0 |
| 2912 | 9 | 1 | 2 | Տարրական ընդհանուր կրթություն | 7427,0 | 7427,0 | 0,0 | 7127,0 | 7127,0 | 0,0 | 3956.4 | 3956.4 | 0.0 |
| | | | | - Աշխատողների աշխատավարձեր և | 4417,0 | 4417,0 | 0,0 | 4417,0 | 4417,0 | 0,0 | 2813.4 | 2813.4 | 0.0 |
| | | | | - Սոցիալական ապահովության վճարներ | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | - Էներգետիկ ծառայություններ (4212) | 300,0 | 300,0 | 0,0 | 300,0 | 300,0 | 0,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | - Կոմունալ ծառայություններ (4213) | 60,0 | 60,0 | 0,0 | 60,0 | 60,0 | 0,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | - Կապի ծառայություններ (4214) | 120,0 | 120,0 | 0,0 | 120,0 | 120,0 | 0,0 | 48.0 | 48.0 | 0.0 |
| | | | | - Ներքին գործուղումներ (4221) | 30,0 | 30,0 | 0,0 | 30,0 | 30,0 | 0,0 | 20.0 | 20.0 | 0.0 |
| | | | | - Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 160,0 | 160,0 | 0,0 | 160,0 | 160,0 | 0,0 | 20.0 | 20.0 | 0.0 |
| | | | | - Գրասենյակային նյութեր և հագուստ | 300,0 | 300,0 | 0,0 | 200,0 | 200,0 | 0,0 | 155.0 | 155.0 | 0.0 |
| | | | | - Առողջապահական և լաբորատոր | 40,0 | 40,0 | 0,0 | 20,0 | 20,0 | 0,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | - Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 2000,0 | 2000,0 | 0,0 | 1800,0 | 1800,0 | 0,0 | 900.0 | 900.0 | 0.0 |
| 2920 | 9 | 2 | 0 | Միջնակարգ ընդհանուր կրթություն, որից՝ | 5100,0 | 5100,0 | 0,0 | 5100,0 | 5100,0 | 0,0 | 3200.0 | 3200.0 | 0.0 |
| 2921 | 9 | 2 | 1 | Հիմնական ընդհանուր կրթություն | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2922 | 9 | 2 | 2 | Միջնակարգ(լրիվ) ընդհանուր կրթություն | 5100,0 | 5100,0 | 0,0 | 5100,0 | 5100,0 | 0,0 | 3200.0 | 3200.0 | 0.0 |
| | | | | - Սուբսիդիաներ ոչ պետական (ոչ | 5100,0 | 5100,0 | 0,0 | 5100,0 | 5100,0 | 0,0 | 3200.0 | 3200.0 | 0.0 |
| 2950 | 9 | 5 | 0 | Ըստ մակարդակների չդասակարգվող | 16036,0 | 16036,0 | 0,0 | 16186,0 | 16036,0 | 150,0 | 10552.0 | 10402.0 | 150.0 |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2951 | 9 | 5 | 1 | Արտադպրոցական դաստիարակություն | 16036,0 | 16036,0 | 0,0 | 16186,0 | 16036,0 | 150,0 | 10552.0 | 10402.0 | 150.0 |
| | | | | - Աշխատողների աշխատավարձեր և | 14046,0 | 14046,0 | 0,0 | 14046,0 | 14046,0 | 0,0 | 9296.0 | 9296.0 | 0.0 |
| | | | | - Սոցիալական ապահովության վճարներ | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | - Էներգետիկ ծառայություններ (4212) | 900,0 | 900,0 | 0,0 | 900,0 | 900,0 | 0,0 | 521.0 | 521.0 | 0.0 |
| | | | | - Կոմունալ ծառայություններ (4213) | 45,0 | 45,0 | 0,0 | 45,0 | 45,0 | 0,0 | 10.0 | 10.0 | 0.0 |
| | | | | - Կապի ծառայություններ (4214) | 145,0 | 145,0 | 0,0 | 145,0 | 145,0 | 0,0 | 85.0 | 85.0 | 0.0 |
| | | | | - Ներքին գործուղումներ (4221) | 300,0 | 300,0 | 0,0 | 300,0 | 300,0 | 0,0 | 180.0 | 180.0 | 0.0 |
| | | | | - Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 300,0 | 300,0 | 0,0 | 300,0 | 300,0 | 0,0 | 110.0 | 110.0 | 0.0 |
| | | | | - Գրասենյակային նյութեր և հագուստ | 300,0 | 300,0 | 0,0 | 300,0 | 300,0 | 0,0 | 200.0 | 200.0 | 0.0 |
| | | | | - Վարչական սարքավորումներ (5122) | 0,0 | 0,0 | 0,0 | 150,0 | 0,0 | 150,0 | 150.0 | 0.0 | 150.0 |
| 3000 | 10 | 0 | 0 | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ | 3800,0 | 3800,0 | 0,0 | 10600,0 | 10600,0 | 0,0 | 8434.4 | 8434.4 | 0.0 |
| 3070 | 10 | 7 | 0 | Սոցիալական հատուկ արտոնություններ | 3800,0 | 3800,0 | 0,0 | 10600,0 | 10600,0 | 0,0 | 8434.4 | 8434.4 | 0.0 |
| 3071 | 10 | 7 | 1 | Սոցիալական հատուկ արտոնություններ | 3800,0 | 3800,0 | 0,0 | 10600,0 | 10600,0 | 0,0 | 8434.4 | 8434.4 | 0.0 |
| | | | | - Այլ նպաստներ բյուջեից (4729) | 3800,0 | 3800,0 | 0,0 | 10600,0 | 10600,0 | 0,0 | 8434.4 | 8434.4 | 0.0 |
| 3100 | 11 | 0 | 0 | ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ | 6431,0 | 6431,0 | 0,0 | 1083,0 | 1083,0 | 0,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 3110 | 11 | 1 | 0 | ՀՀ կառավարության և համայնքների | 6431,0 | 6431,0 | 0,0 | 1083,0 | 1083,0 | 0,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 3112 | 11 | 1 | 2 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | 6431,0 | 6431,0 | 0,0 | 1083,0 | 1083,0 | 0,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | - Պահուստային միջոցներ (4891) | 6431,0 | 6431,0 | 0,0 | 1083,0 | 1083,0 | 0,0 | 0.0 | 0.0 | 0.0 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նոր Գեղի համայնք,Երևանյան 64,093335600,norgeghy@yahoo.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հոկտեմբերի 2013թվականի N 58

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Նոր Գեղի համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

կողմ (11) դեմ ( 0) ձեռնպահ ( 0)

Վանիկ Ավայան
Արմեն Բաբախանյան
Վլադիկ Գրիգորյան
Գագիկ Գևորգյան
ՎահագԳևորգյան
Մանյա Կիրակոսյան
Շիրալի Մամոյան
Մերուժան Մինասյան
Շուշանիկ Նազլուխանյան
Նաթելա Շմավոնյան
Նանուլի Ոսկանյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՖՐՈՆՏԻԿ ԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ
Նոր Գեղի համայնքի ավագանու
2013 թվականի հոկտեմբերի 14-ի N 58 որոշմամբ

## ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքի բնակիչների (այսուհետև՝ բնակիչներ) մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը:

2. Բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը սահմանվում է որպես համայնքում իրականացվող գործընթաց, որի միջոցով բնակիչները տեղեկացվում են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և ուղղակի կամ անուղղակի ներգործություն են ունենում տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների վրա:

3. Բնակիչների, նրանց խմբերի, տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները, մասնակցության ձևերը, ընթացակարգերը սահմանվում են "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով, ինչպես նաև սույն կարգով:

4. Տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցությունը կարող է տեղի ունենալ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների շրջանակներում, նրանց գործունեության բնագավառներում:
5. Գյուղապետարանի աշխատակազմը համայնքի բնակիչներին, հասարակության ներկայացուցիչներին իրազեկում է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և կազմակերպում է վերջիններիս մասնակցությամբ միջոցառումներ՝ սահմանված Հայաստանի Հանրապետության օրենքներով և իրավական ակտերով, ինչպես նաև սույն կարգով:
6. Տեղական ինքնակառավարմանը մասնակցության իրավունք ունի համայնքի տասնվեց տարին լրացած յուրաքանչյուր բնակիչ:
7. Համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությամբ կարող են հանդես գալ բնակիչների ոչ պակաս, քան երկու տոկոսը: Ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությունը ստորագրում են համայնքի՝ դրան կողմ բնակիչները և ներկայացնում են համայնքի ղեկավարին:

Բնակիչների նախաձեռնությունը ավագանու նիստում ներկայացնում է նախաձեռնող բնակիչների ընտրած ներկայացուցիչը՝ որպես հեղինակ, իսկ դրա քննարկման կարգը սահմանում է ավագանու կանոնակարգով:

8. Համայնքի ղեկավարը համայնքի բնակիչների նախաձեռնությունը ստանալուց հետո ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում ներկայացնում է ավագանու նիստին՝ ավագանու քննարկմանը:

9. Նույն նախաձեռնությունը ավագանու քննարկմանը կարող է կրկին ներկայացվել և օրենքով սահմանված կարգով ընդգրկվել օրակարգում՝ դրա հերթական քննարկումից առնվազն վեց ամիս հետո:

10. Համայնքի ղեկավարը.

ա) համայնքի բնակիչների համար ստեղծում է բավարար պայմաններ՝ իրազեկ լինելու տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և մասնակցելու համայնքի կառավարմանն ու զարգացմանը՝ այդ նպատակով օգտագործելով համայնքի ինտերնետային կայքը և այլ իրազեկման միջոցներ:

բ)ապահովում է համայնքի բնակիչների իրազեկման և մասնակցության միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը բնակիչներին մատչելի և հարմար վայրերում, ինչպես նաև ստեղծում է համապատասխան անհրաժեշտ պայմաններ՝ այդ միջոցառումների մասնակցելու ցանկություն հայտնած համայնքի հաշմանդամների և սակավաշարժուն խմբերի համար:

գ)կազմակերպում է տեղական ինքնակառավարմանն առընչվող օրենսդրական և ենթաօրենսդրական կարևորագույն նախաձեռնությունների և նախագծերի, մասնավորապես համայնքի զարգացման ծրագրի և տարեկան բյուջեի, համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և ղեկավարի որոշումների, համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների հանրային լսումներ կամ քննարկումներ, դրանց վերաբերյալ առաջարկությունների ընդունումը և ներկայացումը նախաձեռնողներին և նախագծերի հեղինակներին:

դ)համայնքի բնակիչներին, հասարակության ներկայացուցիչներին իրազեկում և (կամ) ներգրավում է համայնքի տարածքում կազմակերպվող ուսուցման և վերապատրաստման ծրագրերում:

11. Համայնքի ղեկավարը մինչև համայնքի զարգացման քառամյա ծրագիրը և տարեկան բյուջեի նախագծերը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելը կազմակերպում և անցկացնում է հանրային բաց լսումներ և քննարկումներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նոր Գեղի համայնք,Երևանյան 64,093335600,norgeghy@yahoo.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հոկտեմբերի 2013թվականի N 59

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ, ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ, ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ՈՒ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 34-րդ կետի և 54.1-րդ հոդվածի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման), համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և ղեկավարի որոշումների, համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունն ապահովելու համար ստեղծել համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող «Համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման մարմին» անվանումով խորհրդակցական մարմին/ այսուհետ՝ խորհրդակցական մարմին/ հետևյալ կազմով՝

1) Վանիկ Մնացականյան-համայնքի ղեկավարի տեղակալ

2) Ալինա Առաքելյան- *աշխատակազմի քարտուղար*

3) Կարինե Խաչատրյան- <<Նոր Գեղիի թիվ 1 մ/մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի տնօրեն

4) Շիրալի Մամոյան-համայնքի ավագանու անդամ

5) Նաթելա Շմավոնյան-համայնքի ավագանու անդամ

6) Հարությունյան Գավրուշ-համայնքի բնակիչ

7) Գևորգյան Գայանե-համայնքի բնակիչ

2. Սահմանել խորհրդակցական մարմնի գործունեության,հանրային բաց լսումների կազմակերպման, անցկացման և դրանց վերաբերյալ ավագանուն տեղեկատվություն տրամադրելու կարգը՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

կողմ (11) դեմ ( 0) ձեռնպահ ( 0)

Վանիկ Ավայան

Արմեն Բաբախանյան

Վլադիկ Գրիգորյան

Գագիկ Գևորգյան

ՎահագԳևորգյան

Մանյա Կիրակոսյան

Շիրալի Մամոյան

Մերուժան Մինասյան

Շուշանիկ Նազլուխանյան

Նաթելա Շմավոնյան

Նանուլի Ոսկանյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՖՐՈՆՏԻԿ ԹԵՎՈՍՅԱՆ

Հավելված
Նոր Գեղի գյուղական համայնքի ավագանու
2013թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 59 որոշման

# ԿԱՐԳ

«Համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման մարմին» խորհրդակցական մարմնի գործունեության, հանրային բաց լսումների կազմակերպման, անցկացման և դրանց վերաբերյալ ավագանուն տեղեկատվություն տրամադրելու

1. Սույնով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի գյուղական համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող «Համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման մարմին» խորհրդակցական մարմնի/այսուհետ՝ խորհրդակցական մարմին/ գործունեության, հանրային բաց լսումների կազմակերպման, անցկացման և դրանց վերաբերյալ ավագանուն տեղեկատվություն տրամադրելու կարգը:
2. Խորհրդակցական մարմինը իր աշխատանքներն իրականացնում է նիստերի միջոցով, որը արձանագրվում է:
3. Հանրային լսումներին կարող են մասնակցել բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձինք:
4. Հանրային լսումների իրականացման ժամկետն առնվազն 15 օր է:
5. Գյուղապետարանի ինտերնետային կայքում հրապարակվում է Հանրային լսումների հրավեր, որը պարունակում է լսումների վայրի, ժամի, ժամկետների, քննարկման թեմայի, ինչպես նաև քննարկմանը մասնակցելու համար շահագրգիռ անձանց կողմից ներկայացվող դիմումների ընդունման վերջնաժամկետի (եթե նման դիմում ներկայացնելն անհրաժեշտ է) մասին տեղեկություններ:

Հրավերը հրապարակվում է նաև զանգվածային այլ լրատվամիջոցներով, ժամանակակից հեռահաղորդակցման այլ միջոցներով և փակցվում է համայնքի ավագանու նստավայրում, ինչպես նաև այն վայրերում, որոնք մատչելի են համայնքի յուրաքանչյուր մասի բնակչի համար՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երկու հազար բնակչի համար:

6. Հանրային լսումների հրավեր հրապարակելու հետ մեկտեղ ինտերնետային կայքում հրապարակվում է իրավական ակտի նախագիծը, իրավական ակտի ընդունման հիմնավորումը, ինչպես նաև այլ նյութեր:

7. Հանրային լսումների ընթացքում ֆիզիկական և իրավաբանական անձինք ինտերնետային կայքում հրապարակված նորմատիվ իրավական ակտի նախագծի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց առաջարկություններն ու դիտողությունները, որոնք կարող են թողնվել ինտերնետային կայքում հատուկ այդ նպատակով ստեղծված տեղում կամ ուղարկել համապատասխան էլեկտրոնային հասցեով, ինչպես նաև կարող են գրավոր ներկայացնել աշխատակազմին: Եթե առաջարկությունները և դիտողություններն ուղարկվել են էլեկտրոնային հասցեով, ապա աշխատակազմը ոչ ուշ, քան մեկ

աշխատանքային օրվա ընթացքում, հետադարձ կապի միջոցով տեղեկացնում է համապատասխան դիտողությունները և առաջարկություններն ստանալու մասին:

8. Հանրային լսումների իրավերը հրապարակելուց առնվազն տասներկու օր հետո իրականացվում է նաև հանրային կամ շահագրգիռ անձանց հետ բաց լսումներ:

Աշխատակազմի ներկայացուցիչը նախապես նշանակված ժամին բացում է լսումները, ներկայացնում է համապատասխան նախագծի համառոտ նկարագիրը, քննարկման հարցերի շրջանակը, աշխատակազմի ներկայացուցիչ հանդիսացող հանրային լսումների քարտուղարին, ինչպես նաև մասնակիցներին տրամադրում է համապատասխան նյութեր քննարկումների վերաբերյալ, որոնք մինչ այդ հրապարակված չէին եղել ինտերնետային կայքում:

9. Հանրային լսումների քարտուղարը կազմում է լսումների վերաբերյալ գրավոր արձանագրություն, որն ստորագրվում է վերջինիս կողմից:

Արձանագրությունում պետք է ամրագրված լինեն լսումներն իրականացնող մարմնի անվանումը, լսումների ամսաթիվը, թեման, մասնակիցների առաջարկություններն ու դիտողությունները: Մասնակիցները կարող են առաջարկությունները և դիտողությունները ներկայացնել նաև գրավոր: Գրավոր ներկայացված առաջարկությունները և դիտողությունները կցվում են արձանագրությանը:

10. Հանրային լսումների արդյունքում քննարկման դրված հարցերի առնչությամբ ստացված յուրաքանչյուր առաջարկության ու դիտողության վերլուծության, ինչպես նաև դրանց ամփոփման հիման վրա կարող է կատարվել նախագծի անհրաժեշտ լրամշակումներ:

11. Հանրային լսումների ավարտից հետո եռօրյա ժամկետում նախագծի լրամշակված տարբերակը և ստացված ու ընդունված առաջարկություններն ու դիտողությունները տեղադրվում է ինտերնետային կայքում և սահմանված կարգով ընդգրկվում է ավագանու նիստի օրակարգում ու տրամադրվում ավագանու անդամներին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նոր Գեղի համայնք,Երևանյան 64,093335600,norgeghy@yahoo.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հոկտեմբերի 2013թվականի N 60

## ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՄԲԵԹԻ ԲԵՏՈՆԵ ՇԱՂԱԽ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետի պահանջներով համայնքի ավագանին որոշում է.

Սուրբ Հովհաննես եկեղեցու գմբեթի բետոնե շաղախ ձեռք բերելու համար հատկացնել 3 000 000 /երեք միլիոն/ դրամ:

կողմ (11) դեմ (0) ձեռնպահ (0)

Վանիկ Ավայան

Արմեն Բաբախանյան

Վլադիկ Գրիգորյան

Գագիկ Գևորգյան

ՎահագԳևորգյան

Մանյա Կիրակոսյան

Շիրալի Մամոյան

Մերուժան Մինասյան

Շուշանիկ Նազլուխանյան

Նաթելա Շմավոնյան

Նանուլի Ոսկանյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՖՐՈՆՏԻԿ ԹԵՎՈՍՅԱՆ